

## ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

### Ա Զ Գ Ա Ց Ի Ն

Մրտացաւ աջակցութեան կարիքը

Հասարակական մարմնի գործունէութեան յաջողութիւնը ամօնից առաջ հասարակական վստահութիւնը լիուլի վայելելու հանդամանքով է պայմանաւորուած։

Յանուն հասարակական շահի գործող մարմինը անպայման հասարակական խիստ հսկողութեան տակ է լինելու. հնար եղածին չափ հասարակական մարմնի գործառնութիւնը բոլոր տեսակէտներից կանոնաւոր վերահսկողութեան պիտի ենթարկուի. նախ գործողների ակամայ կամ անդամ կամայ սխալ քայլերը ուղղելու, անհամապատասխանները յարմարագոյնով փոխարինելու, երկրորդ՝ հասարակութեանը վստահացնելու, որ մարմնի գործունէութիւնը իրօք որոշուած նպատակին և ոչ կողմընակի շահերին է ուղղուած։

Վերահսկողութիւնը մարմնի ծառայողների արժանապատւութեան տեսակէտից իսկ կարևոր է։ Աշխատաւորը իր խղճի առաջ արդար կզգար իրեն և ոչինչ ծածկելու, գաղելու ծուռ ու մուռ ճանապարհին չէր դիմի։

Բայց այդ ո՞ր հիմնարկութիւնն է, որի գործունէութիւնը ըստ ամենայնի և միշտ էլ խիստ հսկողութեան ու քննութեան կարելի է ենթարկել։ Ոչ միայն զանազան դրսի, չնախատեսնուած պայմաններ, անակնկալ իրադարձութիւններ պատճառ են լինում, որ հասարակական մարմնի աշխատանքը իր բոլոր կողմերով լայն շրջանների ծանօթութեան չառաջարկւի, այլ և զուտ տեխնիքական անյարմարութիւնները, մարդու պակասը, ժամանակ չլինելը պատճառ են դառնում, որ մարմնի աշխատանքը

երբեմն հրապարակ չի դրւում, քննութեան չի առնւում:

Նման դէպքերում հասարակական մարմինի աշխատանքի կանոնաւորութեան և բեղմնաւոր լինելու միակ պայմանը հասարակութեան վստահութիւնը ձեռք բերելն է:

Հասարակութիւնը պէտք է իրապէս վստահ լինի, որ իր նիւթական ու բարոյական աջակցութեանն արժանացած մարմինը յիրաւի տեղին է ծառայեցնում այդ աջակցութիւնը: Հնարաւոր հսկողութիւնն ու իրական վստահութիւնը հասարակական մարմնի գործառնութեան կանոնաւոր ընթացքի անհրաժեշտ պայմաններն են: Այդ դէպքում է, որ իրօք հասարակական մարմինը արժանանում է լիառատ աջակցութեան և ունենում է արդիւնաւէտ գործունէութիւն:

Մայր Աթոռը վայելել ու վայելում է հայ ժողովրդի վստահութիւնը, որի ապացոյցները պատմական մեծ կոթողները, մեր հինաւուրց, հիացմունքի արժանի յիշատակարաններն են և որի ցայտուն արտայայտութիւնը ներկայ աննախընթաց հրէշաւոր աղէտի առաջն առնելու համար հայ ժողովրդի բոլոր խաւերի սրտացաւ աջակցութիւնն էր: Ամերիկայի հեռաւոր անկիւնում օրը գիշեր դարձնող բանւորը, եթէ աչքի լոյսը խաւարացնելով տընտեսած կոպէկներն է ուղարկել Եղբայրական Օգնութեան հասցնելու իր «յաւիտենական նզովքի» դատապարտուած եղբօր վիշտն ամօքելու, եթէ հայ գիւղացին իր ձեռը պտկաս ժամին կոշտացած բազկի, արևկէզ ճակատի արդիւնքն է նւիրաբերել «դժոխքից» մազապուրծ եղբօրը Մայր Աթոռին վստահանալով է, որ այդ արել է:

Այդ ուշագրաւ, պատմական վստահութիւնը Մայր Աթոռի բեղմնաւոր գործունէութեան գլխաւոր ազդակներից մէկն է և բոլորիս պարտքն է հայ ժողովրդի մտաւոր-բարոյական լուսաւորութեան Մեծ Օջախի առաւել բարգաւաճման ու արդիւնաւէտ գործունէութեան համար այդ մեծ վստահութիւնը անխախտ պահել, այդ դարերի դժւար աշխատանքով ձեռք բերած մեծ գանձը անաղարտ ու մաքուր պահել:

Մակայն աչք չպէտք է գոցել և այն հանգամանքի վրայ, որ մեր մամուլի աշխատաւորներից շատերը՝ մեծից մինչև փոքրը երբեմն երբեմն ոչ միայն իրենց անվստահութիւնն են յայտնում, այլև աշխատում են ժողովրդի ունեցած, սերնդէ սերունդ աւանդաբար անցած ու արմատացած վստահութիւնը խախտել:

Կան անվստահութիւն յայտնողներ և դրանք դժբախտաբար այն սրտացաւ աշխատաւորները չեն, որոնք ժողովրդի մտաւոր-բարոյական յառաջաղիմութեան գործի երդուեալ նախանձախնդրութիւնից դրդուած են գրիչը ձեռք առնում, այլ աւելի շատ նրանք են, որոնք հեռու նստած, բայց «հեռուն չմտածելով», այս ու այն անհատի զործն ի նկատի ունենալով հիմնարկութեանն են անտեղի դատափետում։

Քսաներորդ դարում դժուար թէ անսխալականութեան վկայական տրուի մէկին կամ ինքն իրեն տուողին հաւատանք, Բացիզգերեզմանատան բնակիչներից ոչ ոք անսխալականութեան ճանապարհով չի գնում։ Գործողը սխալում է, բնական է, որ Մայր Աթոռի աշխատաւորների մէջ էլ կան սխալականներ. բայց այդ միթէ պատճառ կլինի անվստահութիւն յայտնելու հիմնարկութեան։ Մը տրամաբանութիւնն է թոյլատրում մասնաւոր նախադրեալից ընդհանուրի համար եղբակացութիւն հանել։

Բայց մեզանում ցաւալիօրէն արմատացած սովորութիւն է դարձել՝ անհատի դէմ բողոք ունենալու դէպքում հասարակական հիմնարկութեանը վարկարեկել. մի հանգամանք, որը մեր ազգային կեանքի յառաջխաղացման բազմիցս է մնասել ու մնասում։

Ո՞վ կարող է այժմ բողոքել այն անաշառ, սրտացաւքնադատի անզամ անողոք դատափետման դէմ, որը ուղղուած է այս կամ այն հասարակական գործչի որևէ անտակտ սխալ գործի դէմ։ Բայց բոլորիս պարտականութիւնն է խստագոյնս ծառս լինել, երբ հիմնարկութեան դէմ է ուղղուում քննադատութիւնը, մինչդեռ յանցաւորը մի անհատ է։ Մայր Աթոռի նկատմամբ քննադատութիւն-

ները և անվստահութիւն արտայայտելը առաւելապէս այս ուղղութեամբ է լինում. այս ու այն միաբանի որևէ արարքը մատի փաթաթան դարձնել ու մեղաղրանք կարգալ հաստատութեանը:

Անկասկած բանիմաց մարդկանց համար այդ անընդունելի քննադատութիւնը և աւելի շուտ վարկարեկիչ է գրողի իր խոկ անձի համար: Բայց ինչու մոռանանք և այն հանգամանքը, որ նման վերաբերմունքը յամենայն դէպս հասարակ ժողովրդի վրայ, որը զործից հեռու է և խնդրի էական մասը քննելով չի զբաղւում, ազդում է և պատճառ դառնում սառեցման, ունեցած վստահութեան խախտման:

Սակայն քննադատները Մայր Աթոռի միաբանութեանը մեղաղրանք կարդում են աւելի շատ կամ անծանօթ կամ անբարեհաճ տրամադրուած լինեու պատճառով:

Պահանջում են, որ Մայր Աթոռը հայ ժողովրդի բոլոր վերքերին սպեղանի դնի, բոլոր ցաւերին ճար անի. որ ամեն դժբախտութեան վայրում տուածինը երևայ ու վերջինը հեռանայ: Իրօք այդպէս էլ պիտի լինի. այդ նրա պարտքն է և պահանջը տեղին ըստ էութեան: Բայց ինչու մոռանանք և այն պարզ իրողութիւնը, որ այդ անելու համար կարենը է ունենալ բաւարար թուով աշխատաւորներ և դրամ:

Ահա այն երկու կարենը պայմանները, որոնց քննութեամբ չզբաղւելով մամուլի քննադատները, շարունակում են իրենց պահանջները և իրականացած չտեսնելով իրենց ցանկացածը ապիկարութեան, անձեռնահասութեան վկայականներ են տալիս եղած աշխատաւորներին էլ:

Հրաւիրում ենք այդ բոլոր քննադատողներին Մայր Աթոռ առնուազն մի շաբաթ ապրելու և տեղն ու տեղը ծանօթանալու, թէ իրօք մեղաւոր է Մայր Աթոռի միաբանութիւնը, թէ յիրաւի անգործ է նա, թէ ճշմարիտ որ կայ միջոց և Մայր Աթոռը զլանում է այս ու այն հիմնարկութեան, աշխատանքին իր նիւթական աջակցութիւնը,

Միանգամ արդէն տարածուած լուրը Մայր Աթոռի առասպելական հարստութեան մասին բարեբախտաբար ցըռւեց, Այսօր և ոչ ոքի համար գաղտնիք չի, որ Մայր Աթոռի տարեկան եկամուտը շուրջ հարիւր հազար ռուբլէ և այդ փոքր գումարով պէտք է պահպանուին մի շարք հիմնարկութիւններ, որոնց թւում միայն Հոգեոր Ճեմարանը հարիւր հազար ռուբլու բիւջէ ունենալով, մեծագոյն մասը Մայր Աթոռից է ստանում: Էլ ի՞նչ է մնում Մայր Աթոռին, որ կարելի լինի և մնացած ենթակայ հաստատութիւններին պահել և դրսում: պատահած կարիքները լրացնել:

Անծանօթ կամ դիտաւորեալ վարկաբեկելու ցանկութիւն պէտք է ունենայ գրողը, որ Մայր Աթոռին ներկայումս մեղադրէ նիւթական աջակցութիւն ցոյց չտալու մէջ մեր այլ և այլ հիմնարկութիւններին, երբ իր իսկ միաբաններին, ներկայ կենսամթերքների դների 100—200% աւելացած ժամին, հազիւ ամսական 60—70 ռ. ռոճիկ է տալիս:

Գիտե՞ն այդ քննադատները, որ համալսարանական կրթութեան տէր, երկարամեայ եկեղեցական հասարակական պաշտօններ վարող միարանը օրական հացի գին հազիւ է ստանում, մինչդեռ դրսում իր իսկ աչքի տոաջ ծխական դպրոցի ցենզ ունեցողը ամսական 100—150 ռ. ռոճիկ է ստանում ու գրիչ վերցնում մեղադրելու միաբանութեան: Առնենք հէնց Եղբայրական Օգնութեան գործը:

Ահա երկրորդ տարին է, որ միարանութեան անդամներից շատերը թէ Մայր Աթոռում, թէ դրսում գործում են, մինչև ուժասպառ լինելը աշխատում են, ոև աշխատանքներն անդամ կատարում առանց որևէ վարձատրութեան և այդ մասին խօսք էլ չի եղել, չի էլ լինի. այդ նրանց պարտքն է և անում են: Դրանց կողքին աշխարհական աշխատաւորները ռոճիկ են ստանում և կան այնպիսիները, որոնք բաւական զգալի գումար են ստանում ու համեմատաբար աւելի հանգիստ աշխատանք կատարում: Անշուշտ այդ

չինշանակում, որ աշխարհականներ ևս պիտի ձրի ծառայեն.  
ոչ. թող ստանան և աւելին ստանան ու գործ կատարեն:

Աւշազրաւն այն է, որ դրսում դարձեալ մեղազրանքը  
գործող միաբանների հասցէին են ուղղում, այս ու այն  
թերութեան պատասխանատուն ո. էջմիածնի միաբանն է  
համարւում. իսկ նրան աջակից կամ նրա ձեռքի տակ  
եղող աշխարհական աշխատաւորը ազատազրուած է նկատ-  
ւում պատասխանատութիւնից:

Հաւտատանք, որ միաբանութեան եղբ. Օգնութեան  
գործում ցոյց տուած աշխատանքին էլ անծանօթ են մեր  
գրողները, երբ այդ աշխատանքը բոլորի աչքի տռաջ է  
կատարւում: Չասենք, թէ աւելի շուտ չարամտութիւնն է  
դրդում մարդկանց այս ու այն միաբանի որևէ իրօք պա-  
տահական սխալը, անտակո վերաբերմունքը լրազրի նիւթ-  
դարձնելու, իսկ նրա ամիսներ շարունակ անդադրում աշ-  
խատելը չյիշատակել անդամ: Թող սխալ չհասկացուի այս  
այն մտքով, որ միաբանութեան աշխատող անդամները  
փառաբանութեան կարիք են զգում. ոչ. միաբանը սև  
վերաբերմուն հազնելուց յետոյ պարտականութիւնն է յանձն  
առնել այն օրէն աշխատելու առանց գնահատութիւնը  
ի նկատի ունենալու, բայց երբ մի գործ գրի է առնւում,  
բարեխղճութիւնը պահանջում է լրիւ գրի առնել և ոչ  
աչառութեամբ:

Գործը կայ, կատարւում է. քննադատեցէք. ցոյց  
տուէք թերին ու աջակցեցէք միասին լաւն անելու և ոչ  
թէ հեռու կանգնեցէք ու միայն պահանջեցէք:

Եկել են ու ցանկալի է, որ աւելի շատերը դան  
ծանօթանան Մայր Աթոռի տնտեսական դրութեան հետ,  
ապրեն միաբանութեան մէջ ու իրենց կաշուի վրայ կրեն  
այն զրկանքը, որին ենթակայ է միաբանութիւնը նիւթական  
սղութեան պատճառով և այն ժամանակ եթէ փաստերով,  
տուեալներով համոզուեն, որ յիրաւի կայ և չի տրւում  
կայ ու ծածկւում է, թող մէկի տեղ երկուսն ասեն. պա-  
հանջը կրկնապատկեն:

Դարձեալ անծանօթութեան, չենք ասում չարամտու-

թեան հետևանքը, որ պահանջ են դնում, թէ մեր վանքերը, մեր կալուածները, մեր եկեղեցական այս ու այն սեփականութիւնները պահպանեն խիստ հսկողութեամբ, շահագործւեն, հսկողներ ունենան:

Տեղին պահանջ. բայց անիրագործելի: Գրող-պահանջողը թող մի անգամ Ա. էջմիածնի հրատարակած օրացոյցը բանայ ու կարդայ միաբանների ցանկը, տեսնի Մայր Աթոռը քանի միաբան ունի. որքան հիմնարկութիւններ կան դրսում ու ներսում և որքան մարդ կայ այդ հիմնարկութիւնների համար:

Այս, անելիք շատ կայ. բայց անողների թիւը շատ սակաւ է:

Դրսում այն սխալ կարծիքն է տարածուած, թէ միաբանութեան անդամները աշխատում են միշտ մի քանի պաշտօններ ունենալ, իրենց ձեռքը հաւաքել այս էլ, այն էլ, մինչդեռ իրողութիւնն այն է, որ այդ դրութիւնը առաջ է եկել բաւարար քանակով միաբաններ չկանու պատճառով:

Ծերացած միաբանն անգամ այժմ գործի է, թէև նրա ժամանակն է հանգստանալու, երկարամեայ աշխատանքներ կատարելուց յետոյ մի փոքր էլ հանգիստ առնելու:

Պաշտօնների քանակը մեծ—պաշտօննեաների թիւը սակաւ, բնականաբար մի միաբան հարկադրուած է մի քանի պաշտօն կատարել. ամբողջ օրը աշխատանքի լինել. հազիւ միայն ճաշի ժամին ու ուշ զիշերին հանգստանալ:

Թող չկարծեն քննադատները, թէ ողաշտօններ վարողները իրենց պաշտօնների համար յաւելեալ ոռնիկներ են ստանում և միայն ուրեմն դրամի տեսչն է նրանց դրդում 3—4 պաշտօն առնել իր վրայ: Իւրաքանչիւր միաբան միայն մի պաշտօնի համար է ստանում յաւելեալ 10 ռ. (50 ռ. առնում է անպաշտօն միաբանը). մնացած բոլոր պաշտօնները ստանձնելով նա ձրի է կատարում: Ուրեմն ինչն է դրդում 4—5 պաշտօն ստանձնել. միայն և միայն մարդ չկանու:

Եւ այսպիսի դրութեան մէջ դեռ դրսից շարունա-

կում են մեղադրել, թէ Մայր Աթոռի միաբանները պաշտօնների հետամուտ են, աշխատում են ձեռք ձգել մի քանի պաշտօններ։ Ահա մի գլխիվայր հասկացողութիւն, որ առաջէ գալիս անծանօթութիւնից։ Եթէ մարդիկ մի փոքր հետաքրքրուէին, ծանօթանային եղած դրութեանը, անշուշտնման մեղադրանք չէին ուղղի միաբանութեան հասցէին։

Որ գործը շատ է, աշխատաւորները քիչ, որ դրութիւնը յայտնի է և ծածկելը վտանգաւոր այդ պարզ է, բայց որ աջակցութեան փոխարէն անտեղի քննադատութիւններ են լինում միայն այդ էլ իրականութիւն է։

Նիւթականի և մարդու մեծ պակաս կայ և մեր սրտացաւ քննադատներին մնում է այս ուղղութեամբ աշխատել գրիչ վեր առնելիս ամենից առաջ խորը գիտակցել, որ հայ ժողովրդի յառաջադիմութեան Մեծ Օջախին պէտք է սրտացաւ աջակցութիւն և ոչ հեռուից հեռու խօսել ու քննադատել։

Գործ սիրողը կաշխատէ ոչ միայն եղած թերութիւնը ի յայտ ածել, այլ և ցոյց տալ միջոցներ այդ թերութիւնը լրացնելու։ Գործ անողը խօսելով չի բաւականանում, նա ասում ու անում է։

Մեր քննադատները թող լաւ իմանան, որ Մայր Աթոռը և նիւթական սրտաբուղիս աջակցութեան և պատրաստուած, կոչումով միաբանների կարիք ունի և այս պակասները լրացնելու պարտականութեան մի մասն էլ իրանց վրայ է ծանրանում։

Ազգային մեծ տան զաւակների պարտականութիւնն է ազգի տունը շէն պահել. ազգի օջախի սրտով սպասաւորների թիւն աւելացնել։

Չեղած տեղից պահանջելը, չունեցածի համար մեղադրելը ազգի տան հարազատ ու սրտացաւ զաւակին վայել չէ։

Տւէք ու պահանջեցէք, տւէք ու ստացէք։

Ահա ինչ սկզբունքով պէտք է առաջնորդուեն մեր ազգային յառաջադիմութեան նախանձախնդիրները։